



ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«~~-----~~» ⁴ ~~հեկտեմբերի~~ 2013 թ.

N ^{240/Ա}

ք. Ստեփանակերտ

2014-2015 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության
քննությունների անցումային շեմերը հաստատելու մասին

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի N943-Ն որոշումով հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի» 13 կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել օտար լեզուներից, ինֆորմատիկա և համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների հետևյալ անցումային շեմերը.

1) Անգլերեն լեզու - 54 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 61 միավոր /հումանիտար- հասարակագիտական/, 79 միավոր /հումանիտար-բանասիրական/:

2) ֆրանսերեն լեզու - 200 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 300 միավոր /հումանիտար- հասարակագիտական/, 400 միավոր /հումանիտար-բանասիրական/:

3) գերմաներեն լեզու - 60 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 80 միավոր /հումանիտար-հասարակագիտական/, 100 միավոր /հումանիտար-բանասիրական/:

4) ինֆորմատիկա և համակարգչից օգտվելու հիմունքներ - 35 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 25 միավոր /հումանիտար-հասարակագիտական/, 20 միավոր /հումանիտար- բանասիրական/:

2. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ Լ. Ղարախանյանին՝ 5-օրյա ժամկետում հրամանի մասին տեղեկացնել բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին:

3 . Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Մարգարյանին:



Ս. ԱՍՐՅԱՆ